# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N <<ԳՊԿ-ՄԱ-ԾՁԲ/4>>

ք. Երևան «06» մարտի 2016 թ.

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լ. Մարդոյանի, որը գործում է «ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՎՏՈՆԺԱՆՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Բաղայանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժերը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժերը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի նախահաշվային ժամկետները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության __2__ օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 900 000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածով նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետով նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայության մատուցման արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[2]:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

---

[1] Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

[2] Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքի ընդունման վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ՀՎՀՀ 02704199

Ք.ԵՐԵՎԱՆ ՕՐԲԵԼԻ 22 ՀՀ

ֆինանս.գործառն.վարչ.

Հ/Հ 900011033124

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

[illegible]

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԱԿՏՈՒՆՃԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Աջափնյակ,
Մարգարյան փող. 27/3 շինություն
ՅՈՒՆԻԲԱՆԿ
Հ/Հ 24135019593900
ՀՎՀՀ 01273683
Էլ. հասցե՝
h.badalyan78@gmail.com
հեռ. (094) 494169
ՏՆՕՐԵՆ

Հ. ԲԱԴԱԼՅԱՆ

(ստորագրություն)

Կ.Տ.

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ։*

Հավելված N 1
«06» մարտի 2018 թ. կնքված
<<ԳՊԿ-ՄԱ-ԾՁԲ/4>> ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | 1 միավորի ծառայության մատուցման գինը | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 50111130-1 | Շարժիչի բարձիկի հ/ն | դրամ | 5000 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2018թ. |
| 1 | 50111130-1 | Թափանիվի հ/ն | դրամ | 12 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Թափանիվի պսակի հ/ն | դրամ | 14400 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Շարժիչի յուղի և յուղի զտիչի փոխում | դրամ | 3000 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Յուղի ռադիատորի հ/ն | դրամ | 2400 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Վառոցքի մոմի հ/ն | դրամ | 1000 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Վառելիքի նոսր մաքրման զտիչի փոխում | դրամ | 3000 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Օդի զտիչի փոխում | դրամ | 2000 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Օդի ծախսաչափիչի /ДМРВ/ հ/ն | դրամ | 2400 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Ինժեկտորի բոցանոթի հ/ն | դրամ | 7200 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Ինժեկտորի լվացում, կարգավորում | դրամ | 14400 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Բենզապոմպի հ/ն | դրամ | 10000 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Էլ.բենզապոմպի հ/ն | դրամ | 6000 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Վառելիքի խողովակի հ/ն | դրամ | 2400 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Ներծծման բլոկի հ/ն | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Վառելիքի բաքի հ/ն | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Վառելիքի բաքի մաքրում | դրամ | 10 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Ջրի ջերմաստիճանի տվիչի հ/ն | դրամ | 3 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Ջրի պոմպի հ/ն | դրամ | 2 400.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Յուղի ճնշման տվիչի հ/ն | դրամ | 3 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Յուղի վթարային տվիչի հ/ն | դրամ | 3 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Հովհարի հ/ն | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2018թ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 50111130-1 | Հոլովակի փոկի հ/ռ | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Ռադիատորի հ/ռ | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Ընդարձակման բաքի հ/ռ | դրամ | 2 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Հոլովակի շարժիչի /ատամնավոր/ հ/ռ | դրամ | 9 600.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Տաքացուցիչի ռադիատորի հ/ռ | դրամ | 9 600.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Թերմոստատի հ/ռ | դրամ | 4 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Ջրի պոմպի հ/ռ | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Միջադիրի փոխում | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Խցաբարի 1 կտորի հ/ռ | դրամ | 9 600.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Հովացման հեղուկի փոխում | դրամ | 3 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Աշխատանքային կամ պհս. գլանի հ/ռ | դրամ | 4 800.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Կցորդման սկավառակների և սեղմող առանցքակալի հ/ռ | դրամ | 24 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Էլաստիկ մուֆտի հ/ռ | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Կցորդման տրոսի հ/ռ, կարգավորում | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Կցորդման պեդալի հ/ռ | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Կցորդման եղանիկի /вилка/ հ/ռ | դրամ | 2 400.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Փոխանցման տուփի հ/ռ | դրամ | 20 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Փոխանցման տուփի բարձիկի փոխում | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Փոխանցման տուփի յուղի փոխում | դրամ | 3 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Կցորդման կարգավորում | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Կցորդման գլխավոր գլանի հեղուկի տարայի հ/ռ | դրամ | 600.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Բաշխիչ տուփի հ/ռ | դրամ | 20 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Բաշխիչ տուփի բարձիկի փոխում | դրամ | 3 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Կարդանային լիսեռի հ/ռ | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Կարդանային լիսեռի խաչուկի հ/ռ | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Կարդանային լիսեռի միջ. կախոցի հ/ռ /подвесной кардан/ | դրամ | 4 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Առջևի կամրջակի հ/ռ | դրամ | 30 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Առջևի կամրջակի ռեդուկտորի հ/ռ | դրամ | 30 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Կամրջակի յուղի փոխում | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 50111130-1 | Առջևի կախոցի կիսասռնու /полуосей/ հ/տ | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Առջևի կախոցի կիսասռնու/полуосей/ առանցքակալի հ/տ | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Կախոցի յուղի փոխում | դրամ | 1 200.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Առջևի կախոցի բռունցքի գնդաձև հենարանի / шаровая опора/ հ/տ | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Կախոցի ռեզինեներդիրների հ/տ | դրամ | 30 000.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Կախոցի ռեզինեներդիրներ սայլակի հ/տ | դրամ | 2 400.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Հետևի կախոցի հ/տ | դրամ | 12 000.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Հետևի կախոցի ռեդուկտորի հ/տ | դրամ | 30 000.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Հետևի կախոցի կիսասռնու/полуосей/ հ/տ | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Հետևի կախոցի կիսասռնու/полуосей/ առանցքակալի հ/տ | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Հետևի կախոցի կիսասռնու/полуосей/ առանցքակալի սալնիկների փոխում | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Հետևի կախոցի ռեզինեներդիրների հ/տ | դրամ | 30 000.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Առջևի անվակունդի /ступица/ հ/տ | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Անվակունդի /ступица/ առանցքակալի հ/տ | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Հետևի անվակունդի հ/տ | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Կարդանի հոդակապի հ/տ | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Հոդակապի փոշեծածկերի փոխում | դրամ | 1 200.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Հոդակապի հ/տ /граната передних колес/ | դրամ | 18 000.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Մեղմիչի հ/տ | դրամ | 10 000.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Առջևի Զսպանակի հ/տ | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Ղեկի /баранка/ հ/տ | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Ղեկի/баранка/ փականների փոխում | դրամ | 3 000.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Հարվածիչի (բարձիկի հ/տ) | դրամ | 2 400.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Կայունարարի հ/տ | դրամ | 4 800.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Առջևի կայունարարի փականների փոխարինում | դրամ | 2 400.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Հետևի զսպանակների հ/տ | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 50111130-1 | Հետևի ձգաձողի/штанга/ հ/տ | դրամ | 3 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Հետևի ձգաձողի փականի հ/տ | դրամ | 3 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Զսպանի /рессор/ հ/տ | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Ղեկասյունակի /рулевая колонка/ հ/տ | դրամ | 20 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Ղեկասյունակի առանցքակալի կամ փականների փոխում | դրամ | 7 200.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Ղեկային ձգաձողի /тяга/ հ/տ | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Ղեկի հ/տ | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Հիդրոուժեղարարի մղիչի հ/տ | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխում | դրամ | 2 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Հիդրոուժեղարարի յուղի տարայի հ/տ | դրամ | 2 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Հիդրոուժեղարարի փոկանիվի հ/տ | դրամ | 4 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Կարդանային ռեդուկտորի հ/տ | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Կիս. գլանի հ/տ | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Աշխատանքային գլանի հ/տ | դրամ | 8 400.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Սուպորտի հ/տ | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Ձեռքի արգելակման մեխանիզմի հ/տ | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Ձեռքի արգելակի ճոպանի փոխում | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Ձեռքի արգելակի կարգավորում | դրամ | 1 200.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Արգելակային փողակի փոխում | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Արգելակային կոճղակների փոխում | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Արգելակային համակարգից օդի հեռացում, | դրամ | 2 400.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Արգելակային սկավառակի /թմբուկի/ հ/տ | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Առջևի արգելակային սկավառակի /թմբուկի/ հղկում | դրամ | 4 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Արգելակային հեղուկի փոխում | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Գեներատորի հ/տ | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Գեներատորի քանդում և արատավորում, հավաքում | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Գեներատորի նորոգում | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Մեկնարկիչի հ/տ | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 50111130-1 | Մեկնարկիչի քանդում և սպասարկում, հավաքում | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Մեկնարկիչի նորոգում | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Մեկնարկիչի ռելեի փոխում | դրամ | 2 400.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Ազդանշանի հ/ո | դրամ | 2 400.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Առջևի լապտերի հ/ո | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Լուսարձակների կարգավորում ստենդով | դրամ | 4 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Հետևի լապտերի հ/ո | դրամ | 3 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Ղեկավարման վահանակի ցուցիչների ապակու հ/ո | դրամ | 7 200.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Ղեկավարման վահանակի չափիչ սարքերի հ/ո | դրամ | 2 400.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Ծխարկիչի ճանի բռնակի հ/ո | դրամ | 4 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Բռնկման փականի հ/ո | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Կոճի հ/ո | դրամ | 2 400.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Ապահովիչների բլոկի հ/ո | դրամ | 4 800.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Վառոցքի մոմի լարի հ/ո | դրամ | 500.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Վառոցքի մոմի ծայրակալի հ/ո | դրամ | 1 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Էլեկտրական սարքերի նորոգում | դրամ | 2 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Ապակեմաքրիչների հ/ո | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Ապակելվացիչի շարժիչի հ/ո | դրամ | 1 200.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Դռան փականի լծակի հ/ո | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Կողային հայելիների հ/ո | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Լուսարանի հանում հ/ո, նորոգում | դրամ | 14 400.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Բեռնախցիկի ճոպանի հ/ո | դրամ | 4 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Բռնակի հ/ո | դրամ | 1 200.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Դռների քանդում հավաքում | դրամ | 3 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Դռների ռետինների հ/ո | դրամ | 1 400.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Գազաբալոնային համակարգի աշխատանքի կարգավորում սարքի /համակարգչի/ միջոցով | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Գազի բալոնի հ/ո | դրամ | 14 400.0 | ըստ պահանջի | Օրենքի 22 | 15.12.2018թ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 50111130-1 | Գազբալոնի փականի հ/ռ | դրամ | 7 200.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Գազաբալոնային համակարգի ռեդուկտորի հ/ռ, նորոգում | դրամ | 9 600.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Գազի արտահոսքի հայտնաբերում, վերացում | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Գազաբալոնային համակարգի խողովակի հ/ռ | դրամ | 1 800.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Անվաբացվածքի կարգավորում | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Ավտոմեքենայի լվացում | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Ավտոմեքենայի հանգույցների և դետալների ձգում | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Դռան փականի կարգավորում | դրամ | 1 200.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Բենզինային ռեժիմի փոխարկում | դրամ | 600.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Պաշտպանիչի հ/ռ /[illegible]/ | դրամ | 1 000.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Անվադողի հանում և տեղադրում | դրամ | 600.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Անվադողի քանդում/հավաքում | դրամ | 600.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |
| 1 | 50111130-1 | Անվադողերի հավասարակշռում | դրամ | 1 200.0 | ըստ պահանջի | Օրերի 22 | 15.12.2018թ |

** Մատակարարման ժամկետները չի կարող ավելի լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ | «ԱՎՏՈԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ<br>ՀՀ, ք. Երևան, Աջափնյակ, |

ԿՈՄԻՏԵ
ՀՎՀՀ 02704199
Ք.ԵՐԵՎԱՆ ՕՐԲԵԼԻ 22 ՀՀ
ֆինանս.գործառն.վարչ.
Հ/Հ 900011033124
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Լ. ՄԱՐ[illegible]ՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

Մարգարյան փող. 27/3 շինություն
ՅՈՒՆԻԲԱՆԿ
Հ/Հ 24135019593900
ՀՎՀՀ 01273683
էլ. հասցե՝
h.badalyan78@gmail.com
հեռ. (094) 494169
ՏՆՕՐԵՆ

Հ. ԲԱԴԱԼՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված
«06» մարտի 2018 թ. կնքված
«ԳՊԿ-ՄԱ-ԾՁԲ/4» ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50111130-1 | ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ | | | 90000 | 315000 | 315000 | 315000 | 540000 | 540000 | 540000 | 900000 | 900000 | 900000 | **900000** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** Իրավիճակում գումարները նշվում են աճողական, իսկ պայմանագիրը կնքելիս սյունակի փոխարեն նշվում է ընդհանուր գումարի չափ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ՀՎՀՀ 02704199

Ք.ԵՐԵՎԱՆ ՕՐԲԵԼՈՒ 22 ՀՀ

ֆինանս.գործառն.վարչ.

Հ/Հ 900011033124

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ՄԱՐԴՈՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԱՎՏՈՒՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Աջափնյակ,
Մարգարյան փող. 27/3 շինություն
ՅՈՒՆԻԲԱՆԿ

Հ/Հ 24135019593900

ՀՎՀՀ 01273683

էլ. հասցեն՝

h.badalyan78@gmail.com

հեռ. (094) 494169

ՏՆՕՐԵՆ

ԲԱԴԱԼՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«06» մարտի 2018 թ. կնքված
«ԳԴԿ-ՄԱ-ԾՁԲ/4» ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ________________ | ________________ |
| ________________ | ________________ |
| գտնվելու վայրը ________ | գտնվելու վայրը ________ |
| ՀՀ ________________ | ՀՀ ________________ |
| ________________ | ________________ |
| հվհհ ________________ | հվհհ ________________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«  » «            » 20  թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» «____________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ________
Պատվիրատուն՝ ի դեմս ______________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս ______________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «___» «____________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախաձեռնած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | մատուցման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարմա և ժամկետ ը /ըստ վճարմա և ժամանա կացույց / |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ________________ | ________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ________________ | ________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 3.1
«05» մարտի 2018 թ. կնքված
<<ԳՊԿ-ՄԱ-ԾՁԲ/4>> ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ____________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
(Պատվիրատուի անունը) (Կատարողի անունը)

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________-ին կնքված N ____________
(պայմանագրի կնքման ամսաթիվը) (պայմանագրի ծածկագիրը)

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ________-ին հանձնման-ընդունման եղանակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

____________
ազգանուն, անուն

____________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

____________
ազգանուն, անուն

____________
ստորագրություն